ԸՆԴՀԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Տիգրան Ալեքսանի Ալեքսանյանի «Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական համակարգը» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Պատմական Հայաստանի սահմանային գոտիների ուսումնասիրությունը ունի ոչ միայն զուտ գիտական, այլև առանձնահատուկ ռազմավարական և քաղաքական նշանակություն: Բերդի տարածաշրջանի հնագիտական ուսումնասիրությունը իր ծավալներով էապես զիջում է Հայաստանի այլ շրջանների ուսումնասիրությանը, ուստի նման աշխատանքները ձեռք են բերում առանձնակի կարևորություն: Վերջին տարիներին հատկապես միջնադարի հնագիտության մեջ նոր միտումներ են ի հայտ եկել, երբ հնագիտական նյութը, դուրս է գալիս իր նեղ մասնագիտական քննության շրջանակներից (առարկայի նկարագրություն թվագրություն, անալոգիաներ) և դառնում ավելի լայն ու բազմակողմանի հարցերի քննության գործիք, սկզբնաղբյուր:

Աշխատանքի գիտական արժեքը ատենախոսի կողմից քննության առարկա միջնադարյան հուշարձանների հետազոտությունն է հիմված տեղանքի և պաշտպանական կառույցների տեղագրության համադրման նոր մեթոդաբանության վրա: Դա հնարավորություն է տվել հեղինակին հնագիտական առարկաների սուղ գտածոների պայմաններում, ցույց տալ միջնադարյան մշակույթի կարևոր դրսևորումներից ամրաշինական համակարգի առանձնահատկությունները մեկ տարածաշրջանի օրինակով:

Թեմայի ուսումնասիրությունը բարդ է այն առումով, որ Բերդի տարածաշրջանի ամրաշինական համակարգը հնարավոր է ուսումնասիրել միայն ներկայիս Հայաստանի հանրապետության տարածքում: Այդ համակարգը, բնականաբար, ընդգրկում է նաև ներկայիս Ադրբեջանի Ղազախի, Թովուզի և Գետաբեկի շրջանները, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն կտար հեղինակին Ուտիքի պաշտպանական համակարգի առավել ամբողջական պատկեր տալ: Չնայած այս հանգամանքին ատենախոսը այնքան հանգամանալից է քննում իր հնարավորության տակ եղած

հուշարձանները տարածաշրջանային իր ընդհանրություններով, որ նյութի մատուցումը դառնում է բավականին համոզիչ: Դրան մեծապես նպաստում է նաև կոնկրետ տարածաշրջանի ամրաշինական համակարգի քննությունը հայ ամրոցաշինական դարավոր ավանդույթների համատեքստում:

Աշխատանքի ներածության մեջ հեղինակը ներկայացնում է նպատակը, մեթոդաբանությունը, արդիականությունը, համառոտ բնութագրում է թեմային առնչվող հիմնախնդիրները: Հեղինակը տալիս է տարածաշրջանի պատմաաշխարհագրական նկարագիրը, որ ամրաշինական համակարգի ուսումնասիրության «դարպասներն են» հանդիսանում: Շատ մանրամասն ներկայացված է ուսումնասիրության պատմությունը, որից պարզ երևում է նրա քաջատեղյակությունը՝ այդ ոլորտում առկա հետազոտական դաշտին:

Առաջին գլխի առաջին ենթագլուխը 10-13-րդ դդ վերաբերյալ համառոտ պատմական ակնարկ է, որը ցույց է տալիս այն բարդ ռազմաքաղաքական իրավիճակը, երբ տարածաշրջանում հայտնվում են նոր ռազմատենչ ուժեր՝ հանձինս սելջուկների և հայ Բագրատունիներին փոխարինելու եկած վրաց Բագրատունիների: Դրա հետ միասին Բյուզանդիան շարունակում էր պահպանել իր որոշակի ազդեցությունը, որը երևում է մինչև 12-րդ դ. կեսերը վրաց Բագրատունիներին՝ կայսրերի կողմից շնորհած բյուզանդական տիտղոսներից: Բնականաբար նման պատերազմական իրավիճակում սնկի պես աճում են ամրոցները, բերդերը և պաշտպանական այլ համալիր կառույցները: Պատմական այս համատեքստը լիովին պատճառաբանված է՝ հասկանալու տարածաշրջանի ամրաշինական համակարգի ձևավորումը հատկապես 11-13-րդ դդ: Երկրորդ ենթագլխում ատենախոսը անդրադառնում է Բերդի տարաշածրջանի ամրոցների տեղագրության հիմնախնդիրներին՝ հենվելով գրավոր աղբյուրների և նախկին ուսումնասիրողների տվյալների վրա, քանի որ շատ կառույցներ պարզապես չեն պահպանվել անգամ համեմատած 19-20-րդ դդ. հետ:

Երրորդ գլխում առանձին անդրադարձ է արվում Տավուշ բերդին: Առաջին երկու ենթագլուխները, որոնք ներկայացնում են ամրոցի մասին գրավոր հիշատակությունները և

նախկին ուսումնասիրողների դիտարկումները ճանապարհ են բացում հեղինակի առաջ իր սեփական դիտարկումները անելու՝ արդեն եղած տվյալներին ավելացնելով իր պեղումների արդյունքները, մասնավորապես ամրոցի միջնաբերդում: Չորրոդ ենթագլխում ատենախոսն անդրադառնում է ամրոցի ճարտարապետությանը և կառուցապատման փուլերին: Այս բաժնում նա մանրամասն քննում է տարբեր փուլերի կառուցապատման սկզբունքները՝ հարցերը դիտարկելով միջնադարյան Հայաստանի այլ ամրոցների հետ զուգահեռներ անցկացնելով, որը բացահայտում է ուսումնասիրվող տարածքի ամրաշինական համակարգի ընդհանրությունը տարածաշրջանի այլ հուշարձանների հետ: Առավել հետաքրքիր են ճարտարապետական առանձին մանրամասների (աշտարակներ, մուտքեր) քննությունը ռազմարվեստի տեսանկյունից: 6-րդ ենթագլխում անդրադարձ է արվում Սբ Աստվածածին եկեղեցու պեղումներին, որը 1980-ական թթ. Հ. Եսայանի պեղումների տրամաբանական շարունակությունն է: Սակայն Տավուշ բերդին առնչվող հարցերն ավելի շատ են, քան պատասխանները: Ինքնին այս հարցերի բարձրացնելը և գիտական ձևակերպումը պակաս կարևոր չէ և կարող է ավելի կանոնակարգված ուսումնասիրության ճանապարհ բացել: Հուշարձանը, անխոս, կարիք ունի ավելի ընդլայնված պեղումների, որը, կարծում ենք կիրականացնի Տ. Ալեքսանյանը

Երրորդ գլուխը վերաբերում է Բերդի տարածաշրջանի պաշտպանական համակարգին որպես մեկ միասնական համալիր: առաջին ենթագլուխը նորից ներկայացնում քննվող նյութի պատմական հենքը: Շատ ճիշտ է հեղինակի այն դիտողությունը, որ ամրոցները որպես կանոն կառուցվում են նախորդ դարաշրջաններում կառուցված պաշտպանական կառույցների տեղում, ինչը պայմանավորված է ռազմավարական դիրքով՝ բնորոշ բոլոր ժամանակաշրջաններին: Ատենախոսը պակաս կարևոր չի համարում ճանապարհները նույնպես ընդգրկելու պատշպանական համակարգի մեջ, որը, մեր կարծիքով շատ կարևոր է: Ցավոք, շատ հաճախ ճանապարհները ուսումնասիրվում են որպես առևտրական ուղիներ, մոռանալով որ ցանկացած ճանապարհ պատմական բոլոր փուլերում ձևավորվում է՝ ելնելով տեղանքի ռազմավարական նշանակությունից: Այդ ճանապարհները մի կողմից ծառայել են բանակի

տեղաշարժմանը, մյուս կողմից ունեցել են այնպիսի դիրք, որ վերահսկելի լինեն ամրոցից: Շատ հետաքրքիր է հեղինակի կողմից իշխանի, կառավարողի նստավայրի ընդգրկումը ամրաշինական համակարգի մեջ և դրա առանձին ասպեկտների քննությունը: Առաջին անգամ չէ, որ հայ մասնագետները անդրադարձ են անում բերդ և ամրոց եզրույթներին: Ինչ խոսք, խոսել ամրաշինական կառույցների մասին և չբախվել այդ խդրի հետ հնարավոր չէ: Այս տարբերությունը փորձում է հասկանալ նաև հեղինակը: Սակայն կարծում ենք, որ դրանց տարբերակումը միշտ կլինի զուտ պայմանական: Հոգևոր կառույցների առկայությունը ամրոցներում նույնպես համոզիչ հիմնավորումներով է ներկայացվում տրամաբանական ավարտի հասցնելով ամրաշինական համակարգի ձևավորումը:

Չորրորդ գլխում ատենախոսը համակարգված ներկայացնում է պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութը: Հեղինակն անդրադառնում է պեղումներով հայտնաբերված հնագիտական առարկաներին՝ առանձին՝ Կածարեթից և Մածնաբերդից, և առանձին Տավուշից: Շատ հետաքրքիր նյութ են հայտնաբերված հախճասալերը, որոնք որպես կանոն վկայում են առանձնակի շքեղության մասին և հանդիսանում են կամ վերնախավին առնչվող կառույցների, կամ հոգևոր շինության հարդարանք: Կիրառական նշանակության խեցեղենը, ապակին համահունչ են միջնադարյան Հայաստանի այլ հնավայրերի գտածոներին: Շատ զարմանալի և հետաքրքիր է մետաղից տարբեր նշուշների, հատկապես պերճանքի առարկաների համեմատաբար մեծ քանակությունը:

Այս ամենի հետ միասին կցանկանայինք անել որոշ դիտարկումներ.

1. Կրկնություններից խուսափելու համար տարածաշրջանի քաղաքական իրավիճակը 10-13-րդ դդ. կարելի է ներկայացնել առանձին, այլ ոչ տարբեր գլուխներում, որը կարող է խաթարել ամբողջական պատկերը և դժվարացնել պատմական միջավայրի ընկալումը: Նույնը կարող է վերաբերել ամրոցների ուսումնասիրության պատմությանը, առանձին ուսումնասիրողների ներդրմանը քննության առարկա տարածաշրջանի ամրոցների բացահայտման և բնութագրման գործում:
2. Երրորդ գլուխը կարելի էր վերնագրել *Տավուշ բերդի պեղումները* շեշտը դնելով սեփական հնագիտական հետազոտությունների վրա, իսկ Հ. Եսայանի պեղումները որպես նախասկիզբ, որի շարունակությունը և լրացումն են հանդիսանում ատենախոսի պեղումներով ստացված տվյալները:

3. էջ 49-ում հեղինակը գրում է. «Մուտքերի կազմակերպման այս սկզբունքը լայնորեն տարածված էր ողջ տարածաշրջանում և կիրառվել է ինչպես Հայաստանի (Լոռե բերդ, Բջնի, Ամբերդ), այնպես և հարևան շրջանների (Դմանիսի, Շամշուլդե, Նախիջևան) համաժամանակյա բերդերում»: Կարելի էր պարզապես նշել վայրերը, այլ ոչ թե պատմական Հայաստանի (հատկապես միջնադարում) վայրերը նշել որպես Հայաստանի հարևան շրջան:
4. Տավուշ ամրոցի տնտեսական կյանքը 2-րդ գլխում ներկայացնելու փոխարեն, կարելի էր դրան անդրադառնալ առանձին հենվելով պեղումներով գտնված հնագիտական ամբողջ նյութի վրա, այդ թվում Հ. Եսայանի պեղումների: Դա հնարավորություն կտա հեղինակին ավելի խորացված ներկայացնել թե տնտեսական կառույցները որպես ամրոցի պարտադիր բաղադրիչ, և թե ամրոցի առօրյա կյանքը, ինչը դուրս է մնացել մեր ուսումնասիրողների ուշադրությունից: Կարծում ենք, այդ դեպքում պատկերը ավելի ամբողջական կլինի և կընդգրկի ողջ տարածաշրջանը, այլ ոչ միայն Տավուշ ամրոցը:
5. Հեղինակը անդրադառնալով սալերին որպես կառույցի հարդարանք մեջբերում է վայրեր և հեղինակների, որոնք անդրադարձել են դրան: Ցավոք, այդ շարքում չի հիշատակվում ջնարակած սալերի մեծ քանակությունը հայտնաբերված Դվինի հարևանությամբ գտնվող Տիկինունի ամրոցում, որը հրատարակել են Ա. Քալանթարյանը, Ա. Ժամկոչյանը: Ժամկոչյան Ա., Ճարտարապետական հարդարանքի նմուշներ Տիկնունի բնակատեղից, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, էջ 66-75: Քալանթարյան 1987 – Քալանթարյան Ա., Դվինի արշավախմբի 1983-1984 թթ. աշխատանքների հիմնական արդյունքները, Պատմա-բանասիրական հանդես, համար 1(116), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, էջ 136-146:
6. Առկա են առանձին տեխնիկական բացթողումներ, որոնք պարզապես վրիպակներ են:

Այս դիտարկումները, այնուամենայնիվ, չեն նսեմացնում Տ. Ալեքսանյանի գիտական աշխատանքը և ունեն զուտ խորհրդատվական նշանակություն: Ամփոփելով մեր խոսքը, նշենք, որ Տիգրան Ալեքսանյանի ատենախոսությունը, գիտական մեթոդներով հիմնավորված, լրացնում է միջնադարում Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանային տարածքների ուսումնասիրությունը, ցույց տալով այն կարևոր ռազմավարական նշանակությունը, որն ունի Բերդի տարածաշրջանը և առ այսօր չի կորցրել այն: Թեման

ուսումնասիրված է բազմակողմանի, կառուցված կուռ տրամաբանության վրա, որտեղ մեկտեղված են աղբյուրագիտական տվյալները և հնագիտական պեղածո նյութը: Մասնակցությունը հնագիտական պեղումներին, անգամ ոչ մեծ թվով գտածոների պայմաններում, հնարավորություն է տալիս կարևոր բացահայտումներ անել, ինչը հիանալի ձևով հաջողվել է ատենախոսին:

Ներկայացված սեղմագիրը լիովին արտահայտում է ատենախոսության բովանդակությանը: Հաշվի առնելով ատենախոսության գիտական արժեքը, պետք է ասել, որ այն միանգամայն համապատասխանում է 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար գործող պահանջներին և Տիգրան Ալեքսանի Ալեքսանյանը արժանի է իր հայցած գիտական աստիճանի շնորհմանը:

23.01.2026 թ.

Ընդդիմախոս՝ Արմինե Զոհրաբյան
պատմ. գիտ. թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
Հնագիտության բաժնի գիտաշխատող

Հաստատում եմ՝ Ն. Երանյան
պատմ. գիտ. թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
գիտական գծով փոխտնօրեն